

«Գորիսի թիվ 2 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

ՀՀ Մյունխենի մարզ, Կապանի խճ/34

Հեռ՝ 094204904

էլ.փոստ-goris-2@mail.ru

Ամիս, ամսաթիվ- 29/01/2016թ.

Տնօրեն՝ Ս. Ակլունց



ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ծածկագրով
Գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

ՍՄԳՀԴ 2 ՇՀԱՊՁԲ-15/2-16/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գորիսի թիվ 2 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ՍՄԳՀԴ 2 ՇՀԱՊՁԲ-15/2-16/2 շրջանակային համաձայնագրի համաձայն կից ներկայացված պայմանագրի նախագծում նշված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել <<Գորիսի թիվ 2 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ, քաղաք Գորիս, Կապանի խճ/34 հասցեով մինչև 2016 թվականի փետրվարի 09-ը, ժամը 12:00:

Հայտերը կրացվեն <<Գորիսի թիվ 2 հիմն.դպրոց>> ՊՈԱԿ-ի Գորիս քաղաքի Կապանի խճ/34 հասցեում 2016 թվականի փետրվարի 10-ին ժամը 12:00:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով N ՍՄԳՀԴ 2 ՇՀԱՊՁԲ-15/2-16/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Կից ներկայացնում ենք պայամանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն՝ Ս. Ակլունց

Հավելված 5.1.1

ՀՀ Ֆինանսների նախարարի <<21>> դեկտեմբերի 2015թ.
թիվ 914-Ս հրամանի

Օրինակելի ձև

Հաստատված է

ՍՄԳՀ Դ 2 ՇՀ ԱՊՁԲ-15/2-16/1 ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հանձնաժողովի

2016թ. << հունվարի >> <<16>>-ի թիվ <<1>> ընդմիջմամբ

<<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Հ Ր Ա Վ Ե Ր

<<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ
ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն
նուսնումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը
ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
<<սննդամթերքի>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏ ԱԿՈՎ ՀԱՅՏ ԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏ ԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցությունը իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարգաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողությունը ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետվերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետկապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏ ԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԻ ՀԱՅՏ Ը ՊԱՏՐԱՍՏ ԵԼՈՒ ՀՐԱՋԱՆԿ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

<<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝
<<սննդամթերքի>> ձեռքբերման նպատակով կազմակերպել է << ՄՄԳՀ 2 ՇՀ ԱՊՁԲ-15/2-16/1 >> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագրի կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզ
ք.Գործիս Կապանի խճ.34
հասցեով <<Գործիսի թիվ 2
հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող << 7 >>-րդ աշխատանքային օրվա ժամը «14⁰⁰»-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ 2016թ. <<փետրվարի 10>> - ժամը <<«14⁰⁰»-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [<goris2@mail.ru>](mailto:goris2@mail.ru),

հեռախոսահամարն է՝ <<094204904>>:

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <<Գործիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ <<սննդամթերքի>> ձեռքբերումը, որոնք խմբավորված են <<17>> չախարածիներին՝

N	սնունդ
1	Բանան
2	Շոկոլադե կոնֆետ
3	Շոկոլադ տաք
4	Հյութ
5	Հաց
6	Թթվասեր
7	Քաղցրաբլիթ-պրյանիկ
8	Կաթնաշոռ
9	Երշիկ
10	Թեյ
11	Խնձոր
12	Բիսկիվիթ թխվածքաբլիթ
13	Կրուասան ջեմով
14	Կոնֆետ << Հսկա>>
15	Կոնֆետ << Միգ>>
16	Բուլկի
17	Կրուասան նուտելայով

<<Սննդամթերքի>> տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալներին համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրույթով ամբողջատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրույթով ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության

համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում:

Եթե Մասնակցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակցին իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա նորան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագրեր (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիմունք տեղադրված, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում ----- ապրանքների մատակարարումը¹:

2) Մասնակցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.2) համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին: Նմանատիպ են համարվում ----- ապրանքների մատակարարումը²:

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունված կողմի գրավոր հավաստումը³:

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայություն մասին:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

¹ Եթե գնման առարկայի նմանատիպ իմացության հիմնը գնումների պլանի լրացման կարգի համաձայն և չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

² Եթե գնման առարկայի նմանատիպ իմացության հիմնը գնումների պլանի լրացման կարգի համաձայն և գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

³ Եթե գնման առարկայի նմանատիպ իմացության հիմնը գնումների պլանի լրացման կարգի համաձայն և չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետիստարանի շրջան (էթե առկա է) և արտադրողի անվանումը	Տեխնիկական միջոցի նկարագրի րավունքի տեսակը
1			
2			

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են⁴

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով`

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարության (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելու նախորդող

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարության (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն մասին⁵.

3) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարության (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն մասին⁶.

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով`

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարության (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներին առկայություն մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը` որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները` հետևյալ ձևով`

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներին				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդորոշում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջարկված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները` իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև

⁴ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

⁵ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:

⁶ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

մասնագետներին անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներին նվազագույն պահանջներն են՝

-----: ⁷

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակցին իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակցին իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի սվյալ ներքև:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՅԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակցին երբ կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժնիներին համար: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ոչ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<-7>>րդ աշխատանքային օրվա ժամը «14⁰⁰»-ն, <<ք, Գործիս Կապանի խճ.34>> հասցեով <<Գործիս թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ: Ընթացակարգի հայտերը ստանում են հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար <<Արմինե Բաղդասարյան>>: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

⁷ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, կամ եթե <<ՍՀ խառն քայի ն ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկվճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված ռեակտիվման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

ե. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներքի) պատճենը,⁸

զ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

է. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներին արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁹:

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<-8>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<14⁰⁰>>-ին, <<ք.Գորիս կապանի խճ.34>> հասցեում, <<Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումներին մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությանը և սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

⁸ Եթե հրավերով նախատեսում է Պատվիրատու և

⁹ Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներին արտադրության ապրանք:

3) հանձնաժողովի նախագահը՝ հայ տարարում է հայ տեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայ տերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջների համապատասխան ներկայացված գնային առաջարկը:

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայ տեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայ տարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գներին հավասարությամբ դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայ տեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություններ ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցություններին համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցություններին համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայ տարարվում են առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցություններին համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայ տարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայ տերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայ տերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայ տերի բացման նիստին արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայ տերը գնահատվում է սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայ տերը, հակառակ դեպքում հայ տերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայ տեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն¹⁰: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվին աստիճանաբար տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

¹⁰ Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումներին բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

7.2.4 Եթե հայ տու մ անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով`-----¹¹ փոխարժեքով:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ`

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակց, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի և վազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունները (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջներ կայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ` հրավերի պահանջներին կատարմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրամասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին` առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով`

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցներին` Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններին, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ` ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen.Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան` էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին ¹²:

2) Ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին` առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող` սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին ¹³:

¹¹ Սահմանվում է Պատվիրատուի կողմից:

¹² Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է, ապա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:

¹³ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույք է,

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքվելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքվելուց հրաժարված Մասնակցը:

7.5.2 Մասնակցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

2) Մասնակցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5.3 Քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի գուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնության հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ոչ, քան փաստաթղթերը հանձնաժողովի

անդամներին տրամադրվելու և հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:¹⁴

7.7 Սույն հրավերի 7.6-րդ կետով նախատեսված` Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկներին երկուսն օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու և հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:¹⁵

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկայացնել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրություններին պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՁԱՑՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու և պատակով հրավիրվող նիստում`

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկություններին) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորորեն սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<q>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը սույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:¹⁶

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում`

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակցը հայտարարվում է ընտրված մասնակց:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերի ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

8.1.4 Եթե Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա առաջին տեղն զբաղեցրած մասնակցը հայտարարվում է ընտրված մասնակց:¹⁷

¹⁴ Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը:

¹⁵ Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է:

¹⁶ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկան անշարժ գույքն է, ապա սույն կետը խմբագրվում է նկատի ունենալով, որ առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորորեն փաստաթղթերի չեն ներկայացվում:

¹⁷ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումներին պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումներին բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև եթե գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն բաժնի 8.1.4 կետը հրավերից հանվում է:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

Հայ տերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայ տր գնահատում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայ տր պատաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայ տարարվում է ընտրված:

8.4 Հայ տերի գնահատման արդյունքներով կազմվում է հայ տերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկայանդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանությամբ հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ Մասնակցի հայ տր մերժվում է:

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայ տարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքվելը, Պատվիրատուն հրապարակում է հայ տարարությունն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայ տարարվել

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները:

2) նման հայ տարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

3) նման հայ տարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայ տարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5>> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առնչվում է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկայանդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ

չ ներառված կարծիք (հատուկ կարծիք), սպա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. ՊԱՅ ՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելու և հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուին ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրի կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

Ընտրված մասնակցին պայմանագրի կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրի նախագծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագրի կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը¹⁸, ապա նա գրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ գրկվում է պայմանագրի կնքելու իրավունքից:

9.5 Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնության դեպքում, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. ՊԱՅ ՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀ ՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված 10):

10.3 Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով (օրինակելի ձևը ըստ Հավելված 11-ի), ընդ որում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանված է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ոչ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

11. ԸՆԹԱՅ ԱԿԱՐԳԸ ՉԿԱՅ ԱՅ ԱՅ ՀԱՅՏ ԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

¹⁸ Եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը¹⁹.

3) ոչ մի հայտչի ներկայացվել.

4) պայմանագրի չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակցներին:

11.3 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայտարարության, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆԱՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումներին բողոքարկման խորհրդի գործողությանն ենթարկվող (անգործությանը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությանն ենթարկվող խախտվել են կամ կարող են խախտվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի անագանգելու գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև կենտրոն) թեժ գծին:

12.1.2 Գնումներին մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին անագանգ ստանալու դեպքում՝

1) կենտրոնն ստացված անագանգի վերաբերյալ կազմում է արձանագրության, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. Պատվիրատուի անվանումը,

